

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Նատուրեանի խանութում

Օտարադարձացիք գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 թիւ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերից:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵԱԿԵՆ ՀԵՌԵՐԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՄԵՆՆԻ ՀԵՐԵՐԻՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատը: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция „Мшак“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց-վրաց թատրոնը.— Երբքին տեսուած թիւն. Նամակ վ. Ագուլիսից: Նամակ Ն. Ագուլիսից: Ներքին լուրեր.— Արտաքին տեսուած թիւն. Անգլիա: Ամերիկա: Իտալիա: Արտաքին լուրեր.— Խառն լուրեր: «Մշակ» հեռագիրներ.— Յայտարարութիւններ.— Տեղեկացոյց:

ՀԱՅՈՑ-ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Բացի ուսումնարաններից, բացի լրագրութեանից կայ մէկ այլ կրթութողական հիմնարկութիւն, որ ամեն մէկ ազգութեան, ամեն մէկ ժողովրդին նոյնքան անհրաժեշտ է ունենալ, ինչքան լրագրութիւնը և ուսումնարանները: Այդ հիմնարկութիւնը թատրոնն է:

Կովկասի ազգաբնակութիւնը կազմող նշանաւոր տարրերը՝ հայերը և վրացիները ունեն թէ ուսումնարաններ և թէ լրագրութիւն, բայց չունեն թատրոն և այդ է պատճառը, որ Կովկասի մայրաքաղաքում, Թիֆլիսում, կամ բոլորովին չեն լինում, կամ շատ ուշ ուշ են կրկնվում հայոց և վրաց ներկայացումներ:

Թէ հայերը և թէ վրացիները ունեն փոքր ի շատ օրինաւոր բեմական գրվածներ, երկու ազգութիւնների մէջ էլ, ինչպէս տեսել ենք, կան տաղանդաւոր մարդիկ, որոնք կարող էին օրինաւոր դերասաններ լինել և կը նուիրէին իրանց անձը այդ արհեստին, եթէ իմանային, որ փոքր ի շատ կը վարձատրվեն:

Այս տեսլուց յետոյ մենք հարց ենք առաջարկում՝ արդեօք ի՞նչ է

պատճառը, որ Թիֆլիսում չէ աճողվում ոչ հայոց և ոչ վրաց թատրոնը:

Ի՞նչ է արդեօք հայոց և վրաց թատրոնի չաճողվելու պատճառը, երբ բացի բեմական գրվածներից բացի օրինաւոր խաղացողներից հայերից և վրացիներից արդէն կազմվել է մի որոշ հասարակութիւն որ միշտ յաճախում է տեղական լեզուներով տուած ներկայացումները, որոնք թատրոնին տալիս են յայտնի եկամուտ:

Պատճառը հասկանալի է, պատճառը այն է որ մենք չունենք մեր սեփական թատրոնական շինութիւն:

Ղշմարիտ է հայոց և վրաց ներկայացումներ կարելի է տալ տեղական թատրոնում, տեղական կուրսների դահլիճներում, — բայց նախ այդ շատ թանկ է նստում, այնպէս որ երբեմն բոլոր եկամուտը հարկաւոր է լինում տալ թատրոնին վարձ և երկրորդ՝ այդ տեղերի մէկ կամ երկու ներկայացումների համար վարձելը այնքան դժուարութիւնների և անախորժութիւնների հետ է կապված, որ մի անգամ փորձողը, մի անգամ աշխատողը միւս անգամ չէ կամենում փորձել:

Տեղական գրեթէ բոլոր հիմնարկութիւնների պահպանողները, տեղական բանկերի ակցիոներները, մեր ունեցած ուսուսանական լրագրութեան ակցիոներները՝ մեծ մասամբ, գրեթէ բոլորը վրացիները և հայերն են՝ միթէ դժուար

է այդ մարդիկներին հիմնել ակցիոներական ընկերութեամբ մի թատրոն, մի դահլիճ շինել, որտեղ թէ վրացիները և թէ հայերը կարողանային տալ իրանց ներկայացումները:

Միթէ դժուար է մեր հասարակութեան անդամներին կազմել այդպիսի մի ընկերութիւն, վերցնել մի կամ երկու ակցիա, որոնց արժողութիւնը շատ շատ լինի հարկւր կամ երկու հարկւր ռուբլ, թէ շահ ստանալ իրանց փողից և թէ մի և նոյն ժամանակ զբաղուած մեծ ծառայութիւն մատուցանել ազգին:

Այդպիսի գումարներ շատ են վատնվում այն տեսակ գործերի համար, որոնց անունը յիշելն անգամ մենք աւելորդ ենք համարում, միթէ հայ և վրաց հասարակութեան փոքր ի շատ ունեւոր մասը կը խնայէ այդ գումարը թատրոնի համար, այնպիսի մի հիմնարկութեան համար, որից մեծ օգուտ են սպասում երկու ազգութիւններն էլ, այնպիսի մի հիմնարկութեան համար, որից մեծ օգուտ են սպասում երկու ազգութիւններն էլ, այնպիսի մի հիմնարկութեան համար, որ պէտք է կրթէ հասարակութեան խելքը և զգացմունքը, որ նրա անդամներին պէտք է բարոյական մարդիկ դարձնէ:

Հայոց և վրաց թատրոնի հարցը այնպիսի մի հարց է որ արժանի է ուշադրութեան ոչ թէ միայն մեր հասարակութեան կողմից, այլ և Թիֆլիսի բոլոր թէ ուսաց, թէ հայոց և թէ վրաց անկախ մամուլի կողմից, եթէ մեր լրագիրները ի նկատի ունեն տեղական շահերը:

Բացի այն կրթողական նշանակութեանից, որ կունենայ ժողովրդի վրա հայոց և վրաց թատրոնը, նա կը լինի մի և նոյն ժամանակ միջնորդ այդ երկու ազգութիւնների միմեանց մօտեցալու, այդ երկու ազգութիւնների մէջ սերտ բարեկամական կապեր հաստատելու....

Այս հարցի վրա շատ անգամ խօսվել է, շատ անգամ գրվել է, բայց ամեն անգամ այդ հարցը մոռացութեան է տրվել: Ցանկալի կը լինէր որ այս անգամ էլ մի և նոյնը չը պատահէր: Ցանկա

կալի կը լինէր, որ մեր եղբայրակիցները, տեղական միւս լրագիրների ներկայացուցիչները նոյնպէս մի քանի էջեր նուիրէին վրաց և հայոց թատրոնի իրադրման հարցին:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Եկեղեցականների հետ մեր կապերը կարելի ենք կարող.— ծնուած օրից մինչև գերեզման մտնելը, մարդ միշտ եկեղեցականի հետ գործ ունի: Դեռ երեխան չաչերը չը բացած, նա պէտք է եկեղեցի տանէ և քրիստոնէութեան հաւատի կնիքը՝ նրա ձեռքով վրա դրոյմէ: Յետոյ երեխան հասակն առաւ, կամենում է կեանքի մէջ մտնել.— նա պէտք է կապէ ամուսնական կապը: Յետոյ տարին մի քանի անգամ մարդ պէտք է նրա առջև չօքէ և իր արած — չարած մեղքերը նրան պատմէ: Ի՞նչ խօսքս երկարացնեմ, և մինչև անգամ մեռնելուց յետոյ մարդ չէ ազատվում նրա ձեռքից, — դարձեալ նա պէտք է գալ և մեղ գերեզման տանէ....

Տեսնում եմ, մեր կեանքի ամեն մի խորհրդաւոր շրջանների մէջ նա մեղ հետ գործ ունի: Արի ու մի խօսիր, երբ տեսնում եմ, որ նա իր պաշտօնի մէջ շատ անգամ լինում է անարժան: Երբ մի հասարակ մարդ չէ հասկանում առողջապահական կանոնները, նրան ներում եմ: Բայց երբ որ բժիշկն էլ նոյն օգիտութեան մէջ չէ դնում, նրան պախտաբար եմ: Մեր փրկիչ Յիսուս Քրիստոսը աւելի ժողովրդական կերպով է խօսում այդ բանի վրա. նա կարծեմ այնպէս է ստում իր աշակերտներին, թէ ա՛յլ ոչ էք երկիր աղը, եթէ աղը անհամ լինի, ոչինչ բանի պէտք չի գալ, բայց միայն զցել դուրս — Շատ լաւ խօսք է, եթէ մեր մէջ գտնված անպիտան աղերը դուրս զցէինք: Զոգնոր Կերակուրները բաւական լաւ համ կը ստանային....

Ես բոլորի վրա խօսելու գլուխ չունեմ, ես միայն կը ներկայացնեմ իմ ընթերցողին մի քանի անալի պատկեր, թող նա ինքը դատէ, արդեօք արժանի է մի այդպիսի մարդ Աստուծոյ սեղանի սպասաւոր լինելու:

Երբ դու գալու լինես մեր գիւղը, ընթերցող, շատ անգամ կը տեսնես, փողոցներում թափառում է մի մարդ, կեղտոտ և համառ հարուստով ու պատառոտած կօշիկներով: Նրա դեղնած եւ սեղմը սարսափելի արտայայտութիւն ունի. իսկ աչքերի մէջ վաւրում է վայրենի կատաղութիւն: Մորուքը և գլխի մազերը խճճված են. երկար ժամանակ սանդղը նրանց հետ գործ չէ ունեցել: Նա գնում է անհաստատ քայլերով, անդադար աջ և ձախ, կամ դէպի ետեւ նայելով: Կարծես, կայենի նման մի աներկոյթ գորութեանից հալածվում է նա.— Եւ դու իսկոյն կը մտածես, թէ այդ մարդը ցնորված է....

Նա իր գրպանում ունի ինվոլվեր, թեքից քարէ ընկած հրացան, իսկ ետեքի հետեւում է մի անաղին շուն: Եւ իր հաւատարիմ ընկերից չէ բաժանվում, նրա հետ միշտ ման է գալիս, երբ պէտք էր իր քահանայական պաշտօնը կատարել....

Ընթերցող, դու գումատովեցար, այդ խօսքերը դուցէ թեղ անհաւատալի են թւում, բայց մեր գիւղի ամենօրեայ խօսակցութեան և կատակի առարկաներից մէկն է: Հիմա մօտենանք նրա տանը, պարիսպի վերեւում ծակեր են բացած, և դու կը տեսնես

նոյն հրացանի փողը կիսով չափ դուրս է եկել ծակից և մէկին սպասում է...

Այդ թշնամական միջոց երևակայում է, թէ ինքը թշնամիներ ունի, որ աշխատում են իրան սպանել, և անդադար տեղափոխ դատարանը լըցնում է գանդատներով, պատուաւոր անձանց վերա խնդիրներ տալով:

Գծերը միշտ թշնամիներ են երազում: Բայց եթէ մեր գծին խելօքի տեղ դնենք, աւելի դատապարտելի կը լինի: Մի քանիսն, որ հեղու-թիւն, եղբայրսիրութիւն և միշտ ներքին է քա-րոզում, միթէ ինքը պէտք չէ որ հաշտուի իր թշնամու հետ: Ի՞նչպէս է նա համարձակուում պատարագ մատուցանել, Սուրբ Աւետարանի մէջ այս խօսքերը կարգալուց յետոյ. «Եթէ մատու-ցանելու լինես քո պատարագը սեղանի վրա, և այնտեղ եթէ յիշես, որ քո եղբայրը ունի մի խէթ քեզ դէմ, թող քո պատարագը սեղանի առջև, և քնն առաջ հաշտուի քո եղբոր հետ, և յետոյ եկ քո պատարագը մատուցիր» (Մատ. Աւ. Գլ. Ե. համ. 23):

Եւ ինչպէս է համարձակուում մի քանիսն մի պատուաւոր ժողովրդականի անուանը դիպել, և նրա հետ թշնամական յարաբերութիւններ ու-նենալ, երբ որ ինքը պէտք է լինի հաշտեցուցիչ կապ, առաջնորդութեան օրինակ, սիրոյ և խաղա-ղութեան քարոզիչ իր հօտի մէջ:

Ջարմանալին այն չէ, ընթերցող, որ մեր գիւ-ղը մի այսպիսի քահանայ ունենալու դժբախ-տութիւն ունի, զարմանալի այն է, որ գտնուում են աղաներ, որ գծին իրանց ձեռքում գործիք ունենալու համար՝ նրան պաշտպան են հանդիսա-նում,—զարմանալին այն է, որ մի այսպիսի մարդ հոգեւոր կառավարութեան գործակալ է...

Բայց ես մի բան կտեսնեմ, քանի որ մեր եկեղե-ցական կանոնադրութեամբ, մարմնով արա-տաւոր երբ իրաւունք չունենի Աստուծոյ սե-ղանին մերձենալու, կամ որ և իցէ եկեղեցական պաշտօն յանձն առնելու,—միքան աւելի իս և լ-քով արատաւոր երբ պէտք է դուրս մնան քահանայական կոչումը:

Տեսնենք, մեր հոգեւոր իշխանութիւնը ուշադ-րութիւն կը դարձնէ զրա վրա, և գծին կը հե-ռացնէ մեր եկեղեցուց,—թէ ոչ:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յունվարի 27

Ժողովրդական քահանաների կարեւորութիւնը օրստօրէ աւելի զգալի է դառնում, նրա պահան-ջը զգացվում է մանաւանդ մեր ողորմելի և ան-պաշտպան գիւղացիներին մէջ, որոնք չորսհիւ իրանց տգիտութեան, միշտ զանազան զրկանք-ներին են ենթարկուում: Թողնելով մի կողմ յիշեալ քահանաների բարոյական պարտաւորութիւն-ները, որոնց մասին շատ անգամ խօսվել է «Մը-չակի» թերթերում, դարձնենք մեր ուշադրու-թիւնը մի գիւղացու կէտի վրա, որի իրազօրման մասին պարտաւոր ենք աշխատել թէ խօսքով և թէ գործով: Մեր հոգեւոր զարդերը նպատակ ունենալով մանաւանդ պատրաստել ազգի հա-մար արթնուն և սրտացաւ հովիւներ, անպատ-ճառ պէտք էր մտքած լինէին իրանց ուսման նախագիծի մէջ նաև բժշկական սկզբունքները—մարդակալութեան և առողջապահութեան մա-սին դասեր, որոնց անհրաժեշտութիւնը միան-գամ պայտապանում էր բժիշկ պ. Միքիմանեանը: Լինելով հոգեւոր հովիւ և բժիշկ իր հօտին, ժողովր-դական քահանայի պարտաւորութիւնը կը լինի նոյնպէս օգնել խելից գիւղացու մարմնաւոր բժշ-կութեամբ, մանաւանդ այնպիսիներին, որոնց յա-րաբերութիւնը մեծ մասով կարված լինելով դա-ւառական քաղաքներից և միջոց ու կարողութիւն չունենալով բժիշկ հրաւիրել, շատ անգամ զոհ են գնում զանազան չլմուկի բազմաթիւ գիւղացու վերջին կօպէլը՝ խաբում են նրա յոյսերը նրա սիրելի հիւանդին աւելի էլ վտանգի մատնելով և մինչև մահվան գիւղը տալով: Զուտահատ գիւ-ղացին գիտում է այնուհետև զանազան կախարդ—միլան ձգողներին, որոնք զուգարում են այս կամ այն ինչ սրբից ստացած ցաւ, ուրեմն պէտք է անպատճառ դիմել նրա ոտքը, չը նայելով որ եղանակը սաստիկ ցուրտ է, ճանապարհ հեռու է և հիւանդը ծանր դրութեան մէջ: Այդ վերջին փորձն էլ նրանով է վերջանում, որ շատ անգամ ողորմելի հիւանդը ճանապարհին մեռնում է զեռ-չը հասած սրբի ոտքը: Ահա թէ ինչպիսի վնասն-րի է ենթարկում տգիտութիւնը և նախապաշար-մունքը: Անճարտութիւնը անպաշտպանութեան

հետ միացած՝ ամեն տարի խլում են գիւղերից բազմաթիւ զոհեր, Ժողովրդին հաւատացնում են հոգեւոր հայրերը, թէ այդ մահացութեան պատ-ճառն Աստուծոյ կամքն է, և թէ պղպտէ էր մեռ-նողների ճակատագիրը: Ժամանակ է վերջապէս, որ հոգեւոր զարդերի վարչութիւններն ուղղոր-նէին այդ չարեաց վրա և մտցնէին ուսման նա-խագիծի մէջ նաև բժշկական սկզբունքները մասին զատախօսութիւններ, նախկին սէրը և համակրու-թիւնը վերականգնելու համար մեր հոգեւորակա-նութեանը հարկաւոր է անշուշտ օգտակար կացու-ցանել իրան ժողովրդի թէ հոգեւոր և թէ մարմնա-ւոր կարիքներում: Այս պարագայում անշուշտ գտնուելու արժանի է Ներքին-Ազգութիւն արժա-նապատիւ Տէր-Յակոբ քահանան որ բարեմիտ, հետաքրքիր և ուսումնասէր լինելով իր օգտա-կար հմտութիւններով միշտ ջանացել է օգնել իր հօտին: Պատուելի հայրը այլ և այլ ժամանակ-ներում յարաբերութիւն ունենալով ուսումնական բժիշկների հետ, հաւաքելով նրանցից օգտուէտ տեղեկութիւնները զանազան հիւանդութիւնների մասին, ևս և առաջնորդելով վերջին ժամանակ-ներում հրատարակուող հայագիր բժիշկներից մի քանի գրքերից, որոնց թւում գտնուում է պ. Կ. Քոչարեանի «Տաճար բժիշկ» վերնագրով գիրքը — իբրեւ մի ընտանիքի սրտացաւ հայր՝ չէ դադա-րում իր հօտի մէջ պատահած զանազան հիւանդ-ներին կարեւոր ծառայութիւն մատուցանելուց զերթէ անվարձ: 1872 թ. խոկերայի միջոցին, նա ինքն էր միջակ անձն, որ բազմաթիւ հիւան-դացողներին անվտանգիւ, մահացի պաշտում էր: Մեզ յայտնի է, որ անցեալ տարի մի օժանդակ կատարեալպէս բժշկեց, երբ արդէն վտանգաւոր դրութեան մէջ էր գտնուում և այն և այն: Նոյն-պէս և այժմ, երբ գիւղում և չլմալայ տեղե-րում տարածված է մի տեսակ հիւանդութիւն, որ տեղական բառով կարմիր քամի անուն է կը-րում, դարձեալ նոյն անձն է, որ սիրով այցելում է հիւանդներին և պէտք եղած միջոցներն գործ է դնում հիւանդներին նպաստելու: Յիշեալ հի-ւանդութիւնը՝ որի նշանները բոլորովին համա-պատասխան են պ. Քոչարեանի բժշկարանում նկարագրածի հետ, ունի մի առանձին բնաւո-րութիւն, որով յամառութեամբ ընդդիմանում է իրան բժշկելու գործ դրած յայտնի միջոցներին: Մի ամիս միջոցում այս գիւղում մինչև 20 հոգի հիւանդացան, որոնք սկզբում տաքացնում էին և յետոյ լոյս էր ընկնում առաւելապէս երեխ-ի և մարմնոյ զանազան տեղերում ուռուցքներ: Հի-ւանդներից վախճանվեցան երեք հոգի. մի ծեր, որի կոկորդը և գլուխը սաստիկ ուռել էր, մի երիտասարդ և յետոյ նորա պառաւ մայրը: Որ-դուբաթի գիւղաւորական բժիշկը հրաւիրվելով տեղա, ծերունու կոկորդում եղած ուռուցքները զօրաբարով դադեց, բայց հիւանդը վախճանե-ցաւ: Իսկ երիտասարդը սաստիկ մտառանջու-թենից և ցրտահարութենից մի և նոյն վիճակին ենթարկեցաւ: Մահից յետոյ մարմինը կապուել էր: Վերջինիս հետեց պառաւ մայրն, որտի կակիծից և ոտքի վրա մրտելով: Առ այժմ այդ հիւանդութիւնը առաջացնող պատճառները հա-մարվում են ցրտահարութիւնը, մտառանջու-թիւնը և երկիւղը, իսկ նրա առաջն առնելու գլխաւոր և յայտնի միջոցները—մասնաւոր արիւն առնելն և փորը լցնել պահելը: Որքան ցանկալի կը լինէր, որ բժիշկներն ի նկատի ունենալով այս հանգամանքները, երբեմնապէս «Մշակ» միջոցով հարցրէին զանազան հիւանդութիւնների կամ ցաւերի մասին տեղեկութիւններ և նրանց դար-ման անելու յարմար և նորագոյն միջոցներ, որով մեծ ծառայութիւն արած կը լինէին ազգին:

Եփրեմ Կաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեր նամակագիրը հաղորդում է, որ փետրվարի 6-ին գիշերը աւաղաններ յարձակվում են մէկ արհեստաւորի վրա և նրան ծանր վիրա-ւորում: Արհեստաւորը միւս առաւօտ վախճան-վեցաւ: Լուսմ ենք, աւելացնում է նամակագիրը, որ աւաղանները թուրքեր են և պոլիցիան արդէն նրանց կալանաւորել է: Նրանի պոլիցիական-ները, ինչպէս միշտ, այժմ էլ շատ ճարպիկ կա-տարեցին իրանց պաշտօնը:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են մթերքների հետեւալ գները: Ալիւրի պուղը արծէ 85 կ.— 1 ռ., դարմ. չանալը 65—70 կ., բրնձի պուղը 2—2 ռ. 20 կ., կովի հալած իւղը 12—13 ռ.,

փայտի սպլը 6—8 ռ., սածիւնը 25 ռ., ածուխի բեռը 1 ռ. 30 կ., տաւարի մսի ֆունտը 7 1/2 կ., ոչխարինը 8 կ.:

«Одесский Вѣстник» լրագիրը յունվարի 26-ից հաղորդում է, որ նորերում մեր նախկին Կ. Պօլսի դեսպան, գեներալ—ադիւտանտ Կոմս Ն. Կ Խզնատիւնը գործող բանակը գնալու ժա-մանակ, երկաթուղու գնացքը Բիրդուլա իջնանի մօտ կանգնելով, այն վազօնից որտեղ դեսպանն էր, յանկարծ անյայտապաւ կոմսի պառտակը (СУМКА) իսկոյն իմաց տուեցին ժողովրդիկներին, որոնք բաւական ժամանակ որոնելուց յետոյ, գտան գողին: Պաշտակալի մէջ զանազան նշա-նաւոր թղթեր էին գտնուում, որ բարեբաղա-պէս անվնաս էին մնացել:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի համալսարանի արեւելաւ լե-զուների ֆակուլտետի դեկան Վ. Վ. Գրի-գորեւը խնդրեց ներկայացրեց ազգային լու-սաւորութեան միջխտրին խնդրելով նրան, որ յաղթական աւարների հետ ձեռք բերվին և մեր վերջում թիւրքաց քաղաքներում գտնվող դա-նազան հին ձեռագիրներ և գրքեր: Այդպիսի բաներով հարուստ է մանաւանդ մեր տիրած Արրիանօպոլը: Տիրնօվի մեկնելուց, մի քանի մարդկերանց օգնութեամբ գտնվեցան արդէն բաւական հազարագին հին ձեռագիրներ և հրատարակութիւններ: Հարկաւոր է այդ բաները ձեռք բերել նրա համար որ գիտութեան համար անցաւ չը կորչեն, որովհետեւ ինչպէս մի քա-նիսները պատմում են, չը նայելով որ մեկի-ներում պահպաններ են վախճանած այդ ձեռա-գիրները պահպանելու համար, այնուամենայնիւ տեղական բնակիչները աշխատում են գողանալ գրանց:

Լուսմ ենք որ կոտակարութիւնը Կոլոզնով եղբայրներից սպանված պոլիցիական ծառայողի կնոջը 100 ռուբլ է տուել երեկ:

ՀՈՍԱՆ-ՂԱՍԻՍՑ զրկած մի մասնաւոր նա-մակից իմանում ենք որ գեներալ Պէյման հի-ւանդացել է տիֆից:

Թէ որ աստիճան աճող են գնում մեր թիճ-ԼԻՍԻ բանկերի գործերը, կարելի է դուշակել նրանից որ մեր առևտրական բանկի ծառայող-ներին ուժիկները բաւականին աւելացրել են

Լուսմ ենք որ պ. Միրզոբով, որ ինչպէս յայտնի է, մինչև այժմ չորեքշաբթ մեքենայով էր բանեց-նում թիճԼԻՍԻՍՑ հիւանդանոց իր կտաւի գործա-րանը, այժմ սկսել է Կուր գետից յատկապէս ջուրը բարձրացնել որ իր գործարանի մեքենա-ները շոգիի տեղ ջրի դօրութեամբ բանալին: Այդ գործը համար բաւական մշակներ աշխա-տում են:

Մեզ գրում են որ ԼՈՒՍԻ գաւառում անցած տարի պատահած կենդանիների հիւանդութեան պատճառով այս տարի գիւղացիները կովերի, եղերի և այլ այգիվորի կենդանիների մասին մեծ նեղութիւն են գտնում և շատերը գնացել են վա-գիկավաւ, որ այդ կենդանիներից գնելով ԼՈՒՍԻ բերին և գործածեն, կամ ծախեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Համայնքների խորհրդարանում պ. Աշէյ յաւաքակել է փոխել դատաստանական օրէնքի այն մասը որ քրեական յանցանքով ամբա-տանվածին արգելում է դատի ժամանակ խօսել և հերքել ամբաստանութիւնները: Ոչ իսկ ամբաստանվածը, ոչ էլ իր կինը չեն կա-րող որ և է բանի վկայութիւն տալ: Ուրեմն Անգլիայի այժմեան օրէնքի համեմատ ամբա-տանվող պէտք է որ համար լինի դատարանի առջև. իր վրա ամենատարակ ամբաստանու-թիւններ լսել, չը կարողանայ պատասխանել

և այնու ամենայնիւ, անմեղ համարվի: Ահա մի տարօրինակ բան:

Անգլիական օրէնքի համեմատ ամբաստան-վողը անմեղ կը համարվի մինչև որ իր մեղա-ւորութեան վճիռը արված չէ: Հետեւապէս մինչև այն ժամանակ ազատ է և դատաւորը իրաւունք չունի նրա հետ վարվել իբրեւ մե-ղաւորի հետ և դատապարտել կամ տանջա-քներ տալ: Իսկ դատավճիռը արվելուց յետոյ մեղադրվածը կարող է պաշտպանել իրան: Սրա համար է որ Անգլիայում դատական գործերը շատ երկար են տևում և շատ ան-գամ պատահում է որ դատավճիռը արվելուց յետոյ այդ վճիռը ջնջվում է: Իհն շատ ժամանակ չէ անցել որ շոյս մարդ մահաւան դատապարտվեցան. յետոյ նրանցից երեքի պատիժը թեթեւացաւ, իսկ չորրորդին բոլո-րովին շնորհվեցաւ և ազատ թողվեցաւ: Կա-տաստանական գործերը շատ անգամ երկարա-ձգվելով, ժամանակը այնպիսի դադանքներ է յայտնում որ անկարելի կը լինէր որ և է քննութիւնով իմանալ անմիջապէս:

Պ. Աշէյի առաջարկած փոփոխութիւնը շատ վիճարկութիւնների պատճառ եղաւ: Համայնքների խորհրդարանում և պ. Միմնո, ծարտար իրաւարաններից մինը, պաշտպանել է Անգլիայի դատական ոյժմեան օրէնքները: Վերջապէս առաջարկութիւնը երկու անգամ կարգաւորեց և երկու կողմից էլ թէ հակառակ և թէ նպաստաւոր շատ փաստեր խօսվելուց յետոյ յանձնվել է մի մասնաժողով որ լու-քնելով այդ հարցը, իր վերջական տեղե-կագիրը բերէ խորհրդարանին:

Անգլիայի թագուհին մի գաշապարտութիւն է կապել Կահմէյի 1) թագաւորի հետ: Այդ գաշապարտ համեմատ այսուհետեւ խաղաղու-թիւն և բարեկամութիւն կը լինեն երկու տերութիւնների մէջ, Կահմէյի թագաւորը կը պարտաւորվի արգելել գերիների ծախելը իր տերութեան նահանգներում, անգլիական հպատակները առևտրական ապառու թիւն կու-նենան այդ նահանգներում և կարող կը լինեն անշարժ կալուածներ ունենալ:

Կաշապարտութեան վերջին պայմանը ասում է թէ անգլիական հպատակները ազատ են ներկայ չը գտնվել այն կրօնական արարո-ղութիւններին ուր այդ երկրի բնակիչները մարդիկներին և կանանց զոհում են իրանց աստուածների սեղանների վրայ:

ԱՍԵՐԻԿԱ

Պ. Տիրքլին կուսակիցները աշխատում են կոնգրեսի մէջ նախագահ պ. Հէյսի ընտրու-թիւնը խաղաղութիւնով եղած և անվտանգ հրատարակել տալու: Բայց թէ սենատում և թէ դեպուտատների ժողովում շատ հանրա-պետականներ կան որոնք վտանգաւոր են հա-մարում նորից վիճարկել այդ նախագահա-կան հարցի վրա որի համար այնպիսի յուզ-վեցաւ Միացեալ-Նահանգների Ժողովուրդը: Herald, Evening Post և Tribune, Միա-ցեալ-Նահանգների ամենայայտնի լրագիր-ները, պաշտպանում են պ. Հէյսի և ասում են թէ խաղաղութեան և կարգապահութեան բոլոր բարեկամները կը միանան պ. Հէյսի շուրջը և կարգելն ու կը իցէ վտանգաւոր յուզ-մունքները: Tribune լրագիրը աւելացնում է, «երկրի համար մի մեծ բաղդ է ունենալ մի այնպիսի նախագահ որ վեճերնորութեան զգացումներ չունի իր սրտի մէջ և որ չէ ուզում իր համար վեճեր հանել»:

Ուրեմն յոյս չը կայ որ պ. Տիրքլին կուսա-կիցները և դեմոկրատները աջորդութիւն ունե-նան այս անգամ. նրանք ստիպւած կը լինեն

1) Կահմէյ ծովային Նեղուխայի պետութիւն-ներից մին է, 200,000 բնակիչ ունի, որոնք կու-պաշտ են և մարդկանց զոհում են իրանց աս-տուածներին, կանանցից բազմաթիւ մի բանակ պահպանում է իրանց թագաւորին: Անգլիայի-ները մի քանի կանտորներ են բաց արել այդ-տեղ:

սպասել զոնէ չորս տարի, մինչև նախագահի նորից ընտրվելու ժամանակը:

Մէկտիկայի հարցը որ բաւական անհանգստութիւններ պատճառ էր դառնել երեւթէ շուտով կը վերջանայ խաղաղութեամբ: Պ. Հէյս և իր մինիստրները յօժարում են ծանաչել պ. Պօրթլիոս Կիսկի կառավարութիւնը: Բայց վերջնական որոշումի համար սպասում են պ. Ֆոստերին, Մէկտիկայում Միացեալ-Նահանգներին մինիստրի գալուստ որ տեղեկութիւններ կը բերէ պ. Կիսկի անձնական պիտուութիւններին վերաբերեալ: Ասում են որ Միացեալ-Նահանգներին նախագահը խոստացել է ծանաչել Մէկտիկայի կառավարութիւնը եթէ նա ընդունէ այս երկու պայմանները. 1). Պ. Կիսկի պարտաւոր է թողալ իր Կիսկի-Կիսկի զօրքերին որ Ամերիկայի զօրքերին գործակցութեամբ հալածեն Մէկտիկայի հողերը, ոչխարներ և արջառներ գործող վայրերի հնդկներին: 2). Հարկաւոր է որ Միացեալ-Նահանգներին ուղարկված արմաթները և աշխարհը չարգելեն Մէկտիկա մտնելուց:

Առևտուրը որ գրեթէ դադարել էր Միացեալ-Նահանգներում, երեւթէ միակ է նորից ողբորվել թէպէտ դեռ անտեղծութիւններ համբաւներ լրվում են միշտ 1877 թվի առաջին 11 ամիսներում 471 միլիոն դոլարի ապրանք է բերվել արտասահմանից Միացեալ-Նահանգներում և 596 միլիոն ապրանք է արտաբերվել Միացեալ-Նահանգներից օտար երկրներ: Այդ թուանշանները ցոյց են տալի թէ 1877 թվին եղած առևտուրը 81 միլիոն դոլար աւելի է քան թէ 1876 թվին: Այդ ի հարկէ քաջաբերական նշան է, բայց դրա հետ միասին առևտրական և ֆինանսական օրջափ աղետներ էլ պատահել են անցեալ տարին: 114 ընկերութիւններ որոնք գործ էին ածում 11,500 անգլիական միլիոն տարածութեամբ երկրաւորներ և որոնց գրամագուրը հասնում էր 775 միլիոն դոլարի, դատաստանով զգրկեցան իրանց սեփականութիւններից, որովհետեւ գրաւով վերցրած փողերի տոկոսները չեն կարողացել վճարել: Նաև Ամերիկա գաղութներին թիւն էլ սկսել է պակասել: 1877 թվին Նիւ-Յօրք եկած են 54,536 օտարականներ մինչև որ 1876 թվին եկած էին 71,000: Իհն հինգ տարուց առաջ, մի տարվան ընթացքում Նիւ-Յօրք եկող գաղթականների թիւը հասնում էր 300,000-ի:

Նամայկայից եկած հեռագիրները հաղորդում են մի համբաւ որ կարող է քիչ թէ շատ ծանր կերպարանք ունենալ: Մի անգլիական պատերազմական նաւ Նամայկայի մօտակայ Վորանտ—Կէյս անուն փոքրիկ կղզիներին արտաքսել է մի քանի ամերիկացիներ որոնք այնտեղ գտնուելու համար անհրաժեշտ էին: Այդ ամերիկացիները պնդում են թէ իրանք են գտել այդ հանքը և Միացեալ-Նահանգներին անունով տրել են այդ փոքրիկ կղզիներին: Կինգստոնում Միացեալ-Նահանգների հիւպատոսը (Կոնսուլ) պաշտպանում է ամերիկացիների այդ պահանջը և բողոքում է նրանց արտաքսվելու դէմ: Հարցը նրանումն է թէ արդեօք Վորանտ—Կէյս փոքրիկ կղզիները կախում ունեն Նամայկայի իշխանութիւնից: Անգլիական կառավարութիւնը ուզում է հաստատել թէ գտնած որոնող ամերիկացիները այդ կղզիներ գալուց առաջ, գլխաւոր կղզումը բնակվում էր մի արհեստաւոր որ որտորութիւն էր անում յատուկ թղթաւորութեամբ Նամայկայի իշխանութիւնից: Ուրեմն այն ժամանակ արդէն Նամայկայի իշխանութիւնից կախված էին այդ կղզիները:

ԻՏԱԼԻԱ

Ամերիկա թագաւորը խոստական կարինէտի նախագահ պ. Կէպրէտիսին զօգահութիւն է

ցոյց տուել կառավարութեան ընթացքի համար և յայտնել է որ եթէ այդ ընթացքը շարունակվի, կարինէտին կարճակէ և մի նոր կաբինէտ կը կազմէ ամբողջապէս համակարծիք անձերից:

Հանրապետական կուսակցութիւնը որ Վիկտոր Էմմանուէլի թագման հանդիսի ժամանակ լուռ էր մնացել յարգանքի համար, այժմ սկսել է զլուր բարձրացնել և կենդանութեան նշաններ ցոյց տալ: Ֆորլի քաղաքի քաղաքապետական ժողովը մի նիստում երբ միապետական կուսակցութիւնը առաջարկել է 1000 Ֆրանկ նուիրել Վիկտոր-Էմմանուէլին մի յիշատակարան կանգնեցնելու համար, հանրապետական կուսակցութիւնը առաջարկել է նոյնչափ փող էլ նուիրել Մաձինիի անունին էլ մի յիշատակարան կանգնեցնելու համար: Առաջին առաջարկութիւնը ընդունվել է այն պայմանով որ ժողովը հետեւեալ օրը զբաղվի երկրորդ առաջարկութեան վրա վիճարանելով:

Կէպրէտաներից մի քանիսը պատրաստվել են որ պարլամենտը նորից բացվելու ժամանակ հարցումներ անեն կարինէտին թէ ի՞նչ կերպով են կարգադրել Ամերիկա թագաւորի իր հօրը յաջորդելու գործը: Այդ առիթով լինելու հետաքրքրական վիճարանութիւններից մինն էլ նոր թագաւորի անուն համար կը լինի: Սահմանադրական շրջաններում ստատիկ գաղափարաւորում են միտնադրութիւնը որ խորհուրդ է տուել Վիկտոր-Էմմանուէլին յաջորդելու իրան անունով Ամերիկա թագաւորի իր հօրը յաջորդելու գործը: Այդ գերդաստանի անդամներից IV է սա Ամերիկա անունով Միտնադրութիւնը պաշտպանում է իրան, ասելով թէ Ամերիկա անունով նախորդ երեք իշխանները այն ժամանակ են ապրել որ Սալվադոր գերդաստանը դեռ թագաւորական գերդաստան չէր եղել և եթէ նորընտիր թագաւորի հայրը կոչվում էր Վիկտոր-Էմմանուէլ II, պատճառը այն է որ ինքը Վիկտոր-Էմմանուէլ I-ին էլ թագաւորական թագ էր կրում: Վերջապէս մինիստրութեան բարեկամները հաստատում են իրանց փաստերը այն բանի վրա որ իրանք կամեցել են Իտալիայի թագաւորական գերդաստանը որոշել և Իտալիայի թագաւորներին շարքում աւ կը լինէ Ամերիկա անունով առաջին թագաւորը:

Հէյց որ Իտալիայի քաղաքական գրութիւնը կորոշվել և կը կանոնաւորվել, թագաւորը և թագուհին կը գնան Տուրին և այնտեղից էլ Միլան, ուր քիչ ժամանակ մնալուց յետոյ, կսկսեն մի երկար ճանապարհորդութիւն, Իտալիայի գլխաւոր քաղաքներին այցելելու նպատակով: Ամենից առաջ կը գնան Վենետիկ, Լոմբարդիա և Պիէմոնտ, յետոյ Ալբիոնական ծովը ավերից կը գնան կենտրոնական Իտալիա և Սիցիլիա և այնտեղից կը վերադառնան Հոմ:

Անգլիական կառավարութիւնը շատ աշխատեց որ նոր պապը ընտրութեան համար ժողովը Մալտա կղզում լինի, դրա համար մասնաւոր խոստումներ անելով պապութեան կանցլէր կարդինալ Սիմօնին: Գուցէ անգլիական կառավարութիւնը յոյս ունէր Անգլիայի կարդինալ Մանինգի ընտրութիւնը յաջողեցնել իր ազդեցութեամբ: Բայց վերջին հեռագիրները իմաց են տալիս թէ նորընտիր պապը խոստացի է և պատկանում է չափաւոր կուսակցութեանը:

Իտալական կառավարութեան հրատարակած ստատիստիկայից տեղեկանում ենք որ 1876 թվին 19,776 մարդիկ բոլորովին գաղթել գնացել են Իտալիայից: Սրանցից 13,288 արական և 6,488 իգական սեռից են: Իսկ ժամանակաւորապէս գաղթողների թիւը հասնում է 89,105-ի որոնցից 81,919 արական սեռից և 7,096 իգական սեռից են: Այդ խոստացի գաղթականները հետեւեալ տեղեր են գնացել: 20,534 մարդ Աւստրո-Ունգարիա, 18,653

Շվեյցարիա, 34,500 Ֆրանսիա, 236 Բելգիա և Հոլանդիա, 9,623 Գերմանիա, 57 Անգլիա, 75 Սկանդինավիա, 566 Ռուսաստան, 876 Իբերական թերակղզին, 1,038 Թուրքիա, 768 Նեպոլիտան, 304 Տունիսիա, 1,038 Եգիպտոս, 1,661 Ալժիրիա, 3,461 Պառայի հանրապետութեան երկրը, 14,708 հարաւային Ամերիկայի այլ նահանգները և Մէկտիկա, 1,441 Կանադա:

Իտալիայում մշակների գրութեան վերաբերեալ մի ստատիստիկ էլ հրատարակված է որից տեղեկանում ենք թէ տղա գործաւորներին օրական վարձը միջին հաշուով 50 սանտիմ է, կանանց 1 Ֆրանկ և չափահասների վարձը 1 Ֆրանկ 80 սանտիմից մինչև 2 Ֆրանկ: Մշակութեան ընդունվող տղաները 9-ից մինչև 12 տարեկան են միջին հաշուով: Վերջապէս տղաների և կանանց աշխատութեան ժամանակի չափը հազիւ 4 ժամ կը տարբերվի:

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Պիտ IX պապի մահվան վերջին րօպէներին մասին Հռոմից հեռագրում են փետրվարի 7-ին «Berliner Tagblatt» լրագրին, որ փետրվարի 2-ին պապը մեծ դժուարութեամբ խօսեց ճառ: Որովհետեւ նրա ստանդարտ այլ են կերպով չէր կարողանում ընդունել, այս պատճառով նա երկու օր ոչինչ չը կարողացաւ ուտել: Փետրվարի 6-ին երեկոյան նա կրկին մի քանի այցելուներին ընդունեց, իսկ գիշերով ընդունեց շատ խնային: Գիշերը նա աւելի փառ զգաց իրան, այնպէս որ առաւօտ տակաւիցաւ սրտով ընդունել: Պապի մահ ոչ ոք չէր կարող մտնել, որովհետեւ արգելված էր: Պիտ IX-ին հազարդիւր յետոյ, կարդինալ Սիմօնի շտաբով հեռագրով կանչեց օտարապի կարդինալներին: Գիշերվա 4 ժամին պապը բոլորովին քուրջ ընկնելով, իր շրջապատող մարդկերանց ասաց «Sono finito» (Ես վերջը հասա): Վեճողի սենեակում հաւաքվեցան երեսուն կարդինալներ, նոյնպէս և ագնոսականների գլխավոր, Հռոմի արքայապետական անդամներ, սենատորներ և մարտիան միաբանութեան առաջնորդ: Հաջից յետոյ ժամի 1 ին Պիտի լեզուն կապկպեց: Այս բանից յետոյ սուտ լուր տարածվեցաւ թէ պապը արդէն մեռաւ: Երկու կարդինալներ թերթով կարգում էին աղօթք նրա գլխի վրա, ժամի 3-ին պապին հարցրին, որը կարծես ուշքի էր եկել, թէ փառ է գոյում իրան: Նա պատասխանեց «հալիւ լսելի ձայնով» («Sì») (այո), ժամի 4-ին թոքերի բորբոքումն պատահեց, իսկ 57 րօպէից յետոյ, բժիշկները արդէն յայտնեցին որ պապը մեռաւ, կարդինալների ժողովը իսկույն չը կայացաւ, ինչպէս այստեղ սխալմամբ հաւատացնում էին: Գետոյ են իմացայ որ պապը երեկ երեկոյան տաք ժամին արդէն ուշաթափվել էր: Առաւօտեան չորս ժամին, վատիկանում սպասում էին նրա մահվան: Առաւօտեան այնտեղ գտնված բոլոր կարդինալները հրախրվեցան վատիկան: Պապի մահվան րօպէին ներկայ էին Բիլիո, Պէկկի և դի-Պիետրո կարդինալները: Հռոմում ամբողջ օր մեծ շարժողութիւն էր նկատվում: Հաջից յետոյ ժողովրդեան մեծ բազմութիւն և բազմաթիւ կառքեր լցվեցան ս. Պետրոսի հրապարակի վրա, ժամի 6-ին ս. Պետրոսի և ուրիշ կաթոլիկ եկեղեցիներում բոլոր ժամերը հանգրգին: Քաղաքում այլ ևս զանդակահարութիւն չէ լինում:

ԻՍԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Փարիզի Մօնպարնաս թաղում այս օրերս մի անօրինակ պարահանդէս է կատարվել: Պարահանդէսում երաժշտները, պարողները, վերջապէս ներկայ գտնվող ամեն մարդիկ կոյր են եղել: Պարահանդէսի մօտեք գիւղերից է երկու Ֆրանկ, Ներկայ են եղել պարահանդէսին ընդամենը 200 մարդ (այդ և կին), որոնք վճել են ամեն տարեգլխին կատարել այդ հանդէսը:

Կ. ՊՕԼՈՒՄ հաստատված «Կարմիր Մահիկի» (կիսալուսնի) հիւանդապահ մասնաժողովը հրաւիրում է «Կարմիր խաչի» մասնաժողովները և բարեգործական ընկերութիւնները որ օգնեն Կ. Պոլսում լցուած այր, կին, ծեր և տղայ բազմաթիւ գաղթականներին և չքաւորներին: «Կարմիր Մահիկի» մասնաժողովը յայտարարում է, թէ ամեն օր բազմաթիւ մարդիկ բացի հիւանդութիւններից մեռնում են ցրտից և անօթութեանց:

Չիու միս ծախելու համար Փարիզում կազմված ընկերութեան մասնաժողովի տեղեկա-

գրից իմանում ենք որ այժմ Փարիզում կայ 61 հատ ձիու մակաճառանոց, ուր անցեալ 1877 թվին մորթվել են 10,619 ձի: Նախնիաց տարին, այն է 1876 թվին, մորթված են եղել 9,271 ձի միայն:

Անգլիայի թագուհին ցանկութեան է յայտնել ծնրակապի պատանշանը չնորհել լորդ Բիկտոր-Ֆիլիպին, փոխանակ Ալբրայիթի մարկիզին, որի մեռնելով պակասել է ծնրակապի աստիճանաւորների թիւը: Թագուհին յետոյ հրաժարվել է իր այդ ցանկութեանց: Ծնրակապի նշանը (ordre de la jarretiere) կրում են ապագաները իրանց ձախ ծնկան վրա, իսկ թագուհին, որ զուլն է համարվում այս աստիճանաւորների որոնց թիւը 26-ից աւելի չէ կարող լինել, կրում է այդ պատանշանը իր թևի վրա:

ԻՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր երեկվայ համարում Հռոմի հեռագրի մէջ իմաւամբ տպվեցաւ Լուս VIII, այն ինչ նոր ընտրված պապը անուանվում է ԼԵՈՆ XIII:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 7/19 փետրվարի: Նամիկ-փաշա ուղարկվեցաւ որպէս արտակարգ դեսպան Ս. Պետերբուրգ, մի նշանաւոր հեռագիր Սովֆէտ-փաշայից Ալբրանտօյից ստանալուց յետոյ: Այսօր կայացաւ մինիստրների խորհրդի նիստ:

ՓԱՐԻՉ, 8/20 փետրվարի: Հաստատւ աղբիւրներից հաստատացնում են թէ որովհետեւ լորդ Վէրբի և իշխան Բիսմարկ յայտնեցին որ ներկայ չեն գտնվելու կոնգրեսին, այդ պատճառով և իշխան Գորչակով յայտնեց որ ներկայ գտնվելու չէ:

ԼՈՆԴՈՆ, 9/21 փետրվարի: «Times» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից հեռագրով: Նամիկ-փաշա ուղեւորվում է դէպի Ս. Պետերբուրգ որ ինչպիսի Թագաւոր Կայսրից փոփոխ լրագրութեան պայմանների մի քանի կէտերը, որոնք առաջարկված են եղել թիւրքերին ուսաց լրագոր ներկայացուցիչների կողմից Ալբրանտօյից: Այդ պայմանները շատ խիտ են կրկնում թիւրքերին, որովհետեւ նրանք պահանջում են աւստրիա Բոլզարիայի նոր իշխանութեան քոյր մասնաւորանքներին, իսկ այդ իշխանութեան սահմանը նշանակվելու է մի քանի մղոն Կ. Պոլսի հեռաւորութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի: Պետական բանկի 50% փոխառութեան տոնակը առաջին շրջանի արժէ 95 ր., 75 կօպ., երկրորդ 96 ր., երրորդ 95 ր., 50 կօպ., չորրորդ 95 ր., ներքին 50% առաջին փոխառութեան տոնակը արժէ 235 ր., 25 կօպ., երկրորդ նոյնպէս 235 ր., 25 կօպ., արեւելիան փոխառութեան տոնակը արժէ 93 ր., 25 կօպ., պօլսիանկերից գինը 7 րուբլ 52 կօպէկ է: Տրամադրութիւնը դանդաղ է:

ՎԻԵՆԱ, 9/21 փետրվարի: «Голосъ» լրագրին հեռագրում են: Այստեղ լրագրիները շարունակում են քննադատել Բիսմարկի ճառը: «Fremdeblatt» լրագիրը ասում է որ այդ ճառը Աւստրիային վերադարձեց գործելու ազատութիւնը: Բնագրիմարական լրագրութիւնը անբաւական է, համարելով այդ ճառը երկմտանքի և անորոշ բնաւորութիւն ունեցող Աւստրիայի վերաբերութեամբ: Պաշտօնական շրջաններում հաւատացած են որ լինելու կօնֆերենցիայում Գերմանիան կը պաշտպանէ Աւստրիայի օգուտները Դունայի վրա նաւագնացութեան խնդրի մէջ և Իսրայէլական նեղուցի վերաբերութեամբ: Նրա ստացվեցաւ Բիսմարկի ճառի համառօտ բովանդակութիւնը ունգարական լրագիրները շատ զգուհին: Բայց այժմ, երբ ամբողջ ճառը յայտն է ունգարական լրագիրները հիացած են:

ԺՈՒՐԺԷՎՈ, 9-ին փետրվարի: Ռուսաց զօրքերը, ինչպէս հեռագրում են «Голосъ» լրագրին, գնեւերալ Տօլէբէիի առաջնորդութեամբ մասն Բուչուկ: Բոլզարները յափշտակված կերպով ընդունելիքն ուսանելին, և զգում էին ծաղկիկներ նրանց ճանապարհին, արտայայտելով այդ ձևով իրանց շնորհակալութիւնը դէպի թագաւորը և ամբողջ Ռուսաստանը: Բոլզարական եպիսկոպոսը ասեց զգացմունքով ի մի ձառ ուսաց լրագրի: Թիւրքաց ազգաբնակչութիւնը պահում է իրան խոհմ կերպով: Թիւրքաց զօրքերը ընդունելիքն ուսաց զօրքերին հանդիսաւոր կերպով:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ն Ե Ր

Գանձակի նահանգապետի թոյլտուութեան № 1557 համաձայն պատիւ ունեմ յայտնել որ 1878 թի յունվարի 1-ից ԲԱՅԵՄ ԵՐԵՎԱՆԻ ՇԱՊՐԱՆԻ ԵՒ ԿԼԱՍԵՐԵՐԻ ԽԱՆՈՒԹ: Թէ տպարանին և թէ կազմարարին տված ՊԼԱՏՈՒՆԻՐՆԵՐԸ ՀԱՏ ԷՃԵՆ ԳՆԱՊ, ԵՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՒ ԽՈՍՏԵՆՈՒՄ ԵՄ ՃՀԴՈՒԹԵԼՄԻ ԵՒ շատ կատարել պատասխանատուութիւնը ճշգրտութեան համար ինձ վրա առնելով: Տպարանը և կազմարարի խանութը գտնվում են իմ սեփական տանը և ցանկացողները կարող են դիմել վերևը գրած հասցեով:

Մ. ՄԱԴՐԱՍԻ ԱԿՈՐԵԱՆՑ

2-2

КОНТОРА ГАЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМЪ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՆԵՐԵԱՅԻ ԴՐԱՆԵՆԵԱԿ ԲԱՅ Է ԵՄԵՆ ՕՐ ԵՌԵՎԱՆԵՆ 9 Ժամից մինչև 2 Ժամ Կեսորից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ՆԱԽԱԳԱՇԱՐԱՐՈՒՄ

Անունով մեր աշխատասիրութիւնն արդէն բոլորովին պատրաստ լինելով տպագրութեան համար, հրապարակում ենք ցանկացողներին բաժանորդ դրվել դրան: Գրքը կը պարունակի իւր մէջ մեր կենսից անվաճ նախապաշարմունքներ, որոնց թիւը 600-ից աւելի է: Բաժանորդագրութեան գինը 50 կոպէկ է: Գրքի վերջում կը տպագրվին բաժանորդների ազգանունները:

Բաժանորդագրվել կարելի է հետևեալ տեղերում:

Հաշտարխան, Ալեքսանդրապոլ, Արմենակ, Բագու, Երևան, Թաւրիզ, Թէրաւ, Թեոփոս, Թիֆլիս, Հին-Նախիջևան, Հին-Ղրիմ, Ղարա-Սուլ-բազար, Մեծ-Ղարաքիւս, Մէլիտապոլ:

Մօզդոկ, Ներքին-Աղուլիս, Շամախի, Սիմֆերոպոլ, Սինախ, Սաւուրապոլ, Ս. Էջմիածին և Վերին-Աղուլիս:

ՎՆԵԿԻՕՏՆԵՐ

III-դ հատորի համար շարունակում ենք ներթրեմ ժողովել: Մեզ անեկողտնելու ուղարկողների ազգանունները կը տպագրվին գրքի վերջում. և նոյնից իւրաքանչեւը կը ստանայ մի օրինակ:

Սեր Հասցէն.

Въ Симферополь (Крымъ). Въ Армянское училище учителю Ованесу Назарянцъ.

Յ. Նազարեանց. 3-5

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1878 ГОДУ

„ДОНСКОЙ ПЧЕЛЫ“

ПОЛИТИЧЕСКОЙ-ЛИТЕРАТУРНОЙ ГАЗЕТЫ.

Съ 1-го января 1878 года газета „Донская Пчела“ издается по той же программѣ, какъ и предыдущихъ годахъ, два раза недѣлю: по Четвергамъ и Воскресеньямъ, по одному листу большаго формата въ 5-ти столбцахъ.

Направленіе газеты „Донской Пчелы“ выяснилось достаточно въ теченіи двухлѣтняго своего существованія. Имѣя цѣль быть органомъ при-Азовскаго края, редакція принимаетъ все зависящее отъ нея мѣры, чтобы въ газетѣ, вмѣстѣ съ новѣйшими политическими и другими свѣдѣніями, имѣли также мѣсто и вопросы, относящіеся до нуждъ и интересовъ мѣстнаго населенія.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Ростовѣ на Дону: Съ пересылкою во все гор. Рос. Имп:

На годъ 6 р. — На годъ. 7 р. —
„ полгода 3 „ 50 к. „ полгода 4 „ —
„ 3 мѣсца 2 „ — „ 3 мѣсца 2 „ 50 к.

ЗА ПЕРЕМѢНУ АДРЕСА РЕДАКЦІЯ ВЗИМАЕТЪ 25 КОП.

Подписка принимается въ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону на углу Таганрогской и Московской улицъ, въ домѣ бывшемъ Сидоровыхъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію газеты „Донской Пчелы“ въ Рост. на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адреса четко и разборчиво.

Редакторъ-Издатель И. А. Теръ-Абрамянъ.

4-5

Մէկ երիտասարդ ցանկանում է ունենալ տնե-րում ՄԱՍՆԱՌՈՐ ԴԱՍԵՐ Պատրաստում է նոյն-պէս գինեագիւյր ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԳ և ԵՐ-ՐՈՐԳ՝ դատաւորների համար Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը

Молодой человекъ желаетъ имѣть частныя уроки. Приготовляетъ дѣтей въ первый, второ-рой и третій классы гимназій. Адресъ мож-но узнать въ редакціи „Мшакъ“.

2-8

«Մշակի» խմբագրատանը ծախվում է «ԵՐԿՐՈՐ ԲԱՐԵԿԱՍ ԿԱՍ ՊԵՏՐՈՍԻ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒ-ԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԶԱՊՈՆԻԱՅ» գործ Օտտակար Հուպարյայի թարգմանութիւն Ստեփանոսի Սուլիսեանց ԳՐԳՈՑԿԻ ՕԳՈՒՏԸ ՆԸ-ՇԱՆԱԿԱՎԱՐ Է ԳԱՊԱՎԱՆԵՐԻ ԶԱՍԱՐ ԴՊԱԿՈՒՄ Է Գ. Գրիգորեանցի գրաւածառնո-ցում, պ. Ա. Յովհաննեսեանցի գրադարանում և թարգմանչի մօտ Ներսիսեան զարդուով

2-3

ԳՈՐԾԱԿԱՍԱՐ ԵՒ ԶԱՇՈՒՆՊԱՀ

Փորձված վաճառականական գործերում, գիտե-կարեւոր լիզուները, ցանկանում է տեղ ունե-նալ, թէ վաճառականի մօտ և թէ ուրիշ ծառա-յութեան մէջ. Պատրաստ է և քաղաքից դուրս ծառայել. Հասցէն. «Մշակի» խմբագրատանը.

ПРИКАЗЧИКЪ

Опытный, какъ по операціонной, такъ и по писменной части. Знаетъ необходимыя языки, ищетъ мѣсто, согласенъ и на выѣздъ. Адресъ: Редакція газеты „Мшакъ“

1-5

Въ книжномъ магазинѣ Ушарова продается книга и описаніе древностей города Тифлиса, соч. Платона Юсеевскаго. Цѣна 50 к.

Ուշարովի գրքերի խանութում ծախվում է «Թիֆլիսի հուշիւրների նկարագրութիւնը» հեղ. Պլատոն Իոսելիանի, գինը 50 կ.:

2-4

ՓԵՏՐՎԱՐԻ 11.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		Ր.		Կ.		ՀԵՌԱԳԻՐ		Ր.		Կ.		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՂԻ		ՓՈՍՏ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԼԱՏԱՍԻԱՆՆԵՐ	
(Փետրվարի 10-ին)																			
Ոսկին (պոլումպերիալը)	8	3	Կողմասի և Ան-																
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1350	—	գրկովկասի քա-																
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1180	—	ղաքները	1															
Վերջինի 50% առաջի փո-			Ռուսաստան	2															
խառնութեան տոմ. 100 . . .	233	—	Աւստրիա	3															
Երկրորդ 50% վերջինի »	235	—	Անգլիա	4															
Մարտի կուրսը 270 —	100	—	Գերմանիա	2	88														
Լոնդոնի կուրսը Օգոստայի	9	40	Ֆրանսիա	3	75														
վրա	9	60																	
Վերջինի կուրսը ամէ 121 զլ.	100	—																	
Կարեւոր բարաթը	5	60																	
Աւստրալիան բանկի աւ-																			
ցիան 200 մ.	265	—																	
Փոթի Թիֆլիսեան երկա-																			
թուղու աւցիան 125 մ.	125	—																	
Շաբաթը բարաթ	8	—																	
» միւս տեսակը	9	—																	
» շաբաթաւոր	10	—																	
» տրանզիտ	8	—																	
» մաքուր վճարած	16	—																	
Բաժնեկր Ներսիսեան Ա. մար-																			
տի սերմից	8	50																	
Միւս տեսակը հին սերմից	7	20																	
Բոլորից թուել	7	50																	
» թարաքալի	4	60																	
Ալիւր Դորապալ	2	—																	
» Ներսիսեան	—	—																	
Գարին	1	40																	
Մամբ. քաճարակ (степ.)	14	20																	
Մետաղա Նուսուռ	170	—																	
Կարիւթ Նուսուռ	95	—																	
Կարիւթ Նուսուռ (բոմ.)	41	—																	
Ֆրիզոնը (շաբթ) Աղու-																			
լիս	55	—																	
Կոֆէն մօկօի	28	—																	
» լիվանի	—	—																	
» մարտինկոյինը	28	—																	

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20	2. 40	1. 33
Սուրբ	5. 22	3. 92	2. 18
Բիւն	9. 2	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

Սեյիթէ	90	68	38
Գործի	3. 20		